ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« ----» ---------- 2018թ. N-----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի
N622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու, Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու և Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի N397-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N622-Ն որոշումը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«19» մարտի 2013 թ. N 622-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 359-Ն ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
14-Ի N 397-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 19-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով նախատեսված Երևանի քաղաքապետի լիազորությունները պատվիրակել Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին:

2. Ուժը կորցրած ճանաչել Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին լիազորություններ վերապահելու մասին» N 359-Ն և 2012 թվականի փետրվարի 14-ի «Երևան

քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակելու մասին» N 397-Ն որոշումները:»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

2018 թ. _____ « »

Երևան

## ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝

1. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը և համայնքի բյուջե փոխանցումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

2. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու կողմից կարող են վերապահվել օպերատորին կամ այլ կազմակերպությանը (կազմակերպություններին):

3. Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարի հաշվարկումը, ինչպես նաև այդ վճարի գանձումն օպերատորի կամ այլ կազմակերպության կողմից իրականացվելու դեպքում օպերատորը կամ տվյալ կազմակերպությունը համայնքի ղեկավարին է ներկայացնում ամսական տեղեկատվություն՝ հաշվետու ժամանակաշրջանում իրենց կողմից աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների (հաշվետվություն) վերաբերյալ:

4. Աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգը սահմանում է համայնքի ավագանին:

5. Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Աղբահանության վճարը հաշվարկողի կողմից սխալ հաշվարկվելու դեպքում պակաս վճարված աղբահանության վճարի՝ գրավոր տեղեկացնելու օրվա դրությամբ հաշվարկված՝

1) գումարները վճարում է աղբահանության վճար վճարողը՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան երեք տարվա համար, եթե սխալ հաշվարկի համար պատճառ են դարձել աղբահանության վճար վճարողի ներկայացրած կեղծ տվյալները.

2) գումարների վճարումն ուշացնելու համար հաշվարկված տույժերը վճարում է հաշվարկող մարմինը, բացառությամբ սույն մասի 3-րդ կետում նշված դեպքերի.

3) գումարների վճարումն ուշացնելու տույժեր չեն հաշվարկվում, եթե հաշվարկող մարմինը տեղական ինքնակառավարման մարմինն է.

4) սույն մասի 1-ին և 2-րդ կետերում նշված գումարները ներառվում են և ենթակա են վճարման ընթացիկ ամսվա վճարի հետ: Աղբահանության վճար վճարողի կամ հաշվարկող մարմնի դիմումի առկայությամբ դիմումատուի հետ համայնքի ղեկավարը կարող է 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմել վճարման ժամանակացույց, որով սույն կետում նշված գումարների մարման ժամկետը կարող է սահմանվել ժամանակացույցի կնքման օրվանից առավելագույնը 6 ամիս: Սահմանված ժամանակացույցի՝ աղբահանության վճար վճարողի կողմից առաջին իսկ խախտման դեպքում կիրառվում են սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տույժերը:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ քաղաքապետի առաջարկությամբ և ավագանու որոշմամբ վարչական շրջանի ղեկավարին կարող են պատվիրակվել նաև քաղաքապետի այլ լիազորություններ, բացառությամբ ավագանու հետ հարաբերություններում ունեցած լիազորությունների:

Հիմք ընդունելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասը, «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը և Երևանի քաղաքապետի առաջարկությունն Երևան քաղաքի ավագանին 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշմամբ աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) և օրենքով նախատեսված Երևանի քաղաքապետի այլ լիազորությունները նշված որոշմամբ նախատեսված դեպքերում.

1) պատվիրակվել է Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին.

2) վերապահվել է.

ա. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպություններին.

բ. բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշմամբ նշված կազմակերպությունների կողմից իրականացվող ծառայության դիմաց և կառավարման մարմիններին՝ նրանց հետ կնքվող պայմանագրերով նախատեսվել են վճարումներ (ծառայության գին և նվիրատվություն)՝ գանձվող գումարների մինչև 10% չափով:

Երևան քաղաքի ավագանին 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշմամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված կազմակերպություններին և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին Երևանի քաղաքապետի լիազորություններ վերապահելու արդյունքում իրականացված պիլոտային ծրագիրը չի տվել այն դրական արդյունքները, որոնք ակնկալվում էին:

Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին Երևան քաղաքի ավագանու որոշումներով պատվիրակվել են գույքահարկի, հողի հարկի, հողի վարձավճարների և կառուցապատման իրավունքի վճարի գանձման լիազորություններ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 26.11.2018թ. պետական փորձագիտական եզրակացության համաձայն՝ «Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ աղբահանության վճար վճարողների շրջանակը գրեթե նույն է, ինչ գույքահարկի, հողի հարկի և հողի վարձավճարներ (այդ թվում՝ կառուցապատման վճարներ) վճարողների շրջանակը, նպատակահարմար է աղբահանության վճար վճարողներին հաշվառելու, աղբահանության վճարը հաշվարկելու, ինչպես նաև այդ վճարը համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշիվ գանձելու (մուտքագրելու) և օրենքով նախատեսված Երևանի քաղաքապետի այլ լիազորությունները պատվիրակել միայն Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին, որոնք կիրականացնեն նշված լիազորություններն իրենց աշխատակազմերի միջոցով և որի արդյունքում կխնայվեն նաև որպես ծառայության գին և նվիրատվություն վճարվող գումարները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N622-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի մարտի 19-ի N622-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ